

և կրօնական իրաւունք զոհելով: Զի վերջինն առաջնոյն բնական հետեանքն է:

Իրաց այս վիճակին առջն՝ արեւելեան Վաթովիկ ազգայիններէ շատեր՝ որոց որդիքը Վենետիկ Միտիթարեան հարց վարժարանները կը կրթուին, կը խորհին Հայոց հետ միաբանելով ընկերութիւն մը հիմնել և առ նուազն 1000 ոսկի դրամազուլս մը գումարելով գիշերօթիկ վարժարան մը բանալ Անտօնեան հարց տնօրէնութեան ներքէ: Այս խորհուրդը մարմնաւորելու համար անցեալ կիրակի օրը Բերա ժողով մը գումարուած էր, ուր քանի մը Լուսաւորչական հայք ալ ներկայ էին:

Այս վերջիններէ՝ համազգային գիշերօթիկ վարժարան մը բանալու հաւանութիւն տուին, բայց փոխանակ Անտօնեան կամ ուրիշ որ և է կղերի ձեռք յանձնելու ընկերութենէն ընտրեալ Տնօրէն ժողովոյ մը վերատեսչութեան յանձնել առաջարկեցին՝ կղերին դերը միմիայն շաբաթը երկու կ' երեք անգամ՝ իւրաքանչիւր իր դաւանակից աշակերտաց կրօնագիտութիւն ուսուցանելու սահմանին մէջ պարփակելով:

Այս առաջարկութեան վրայ որոշում մը չէ եղած, և չնք գիտեր թէ կղերական ազդեցութիւնը պիտի թողու որ Հայոց առաջարկած կերպըն ընդունուի:

Ըստ ողջմտութեան աշխարհական դպրոցներու՝ մանաւանդ համազգային դպրոցի մը մէջ՝ ուր ամեն դաւանութենէ ազգային մանկունք կրնդունուին, այս կամ այն դաւանութենէ կղերին առաջնորդութիւնը բացարձակ անտեղութիւն մ' է: Աղերին դերը միմիայն կրօնք և բարոյականութիւն ուսուցանել է, և այն ալ իւրաքանչիւր իր դաւանակիցներուն. այս պաշտօնն ալ անոնց կը յանձնուի:

Այս պայմանաւ միայն կարելի է հիմնել համազգային վարժարան մը, եթէ ստուգիւ հիմնելու գիտաւորութիւն կայ, և մէք սիրով և համակրութեամբ կողջունենք այնպիսի հաստատութիւն մը՝ ուր ազգային հոգեւոյն առջև կրօնական խտրութիւն ու նկատմունք չըլլով, ազգային ազատ կրթութիւն կրնայ տրուիլ ազգին զաւակաց:

Երանի թէ Համազգային Բարեգործական ընկերութիւնն այսպիսի ազատ գիշերօթիկ վարժա-

րանի մը հիմնարկութեան ձեռնարկէր, որով իր արդէն գումարած դրամներն ալ պահ մ' առաջ արդիւնաւորիլ կ'սկսէին՝ ազգային կրթութեան կենսատու հացը ջամբելով Հայաստանի կարօտ զաւակաց:

Մասիս Թ. 1425 Օգոստոս:

Բ Է Թ Ղ Ե Հ Ե Մ

Լատինք, ամսոյս 13ի՝ գիշերային նոր հրաշք գործեցին Բէթղէհեմի մէջ: Քառասնից այրը, որ ըստ վաւերական հրովարտականք երեք ազգաց (Հայոց, Յունաց և Լատինաց) սեպհականութիւնն է և հակառակութեան պատճառաւ պարսպը կիսաքանդ մնացած էր, զաղտնածածուկ ջանիք նորոգեցին Լատինք և երկաթեայ դուռն կախելով՝ զարմացուցին բոլոր Երուսաղէմը, փոխանակ ներկային՝ 1865 թուականը արձանագրելով պարսպի վրայ, որպէս թէ վաղուց շինած են: Այս հրաշքը կատարեցին այն գիշերը, երբ արդէն բացառութիւն եղած էր իրենց, որ բնաւ իրաւունք չունին Ս. Յակովբայ տաճարին մէջ պատարագելու: Սակայն անտարակոյս ենք որ, Տեղոյս Վսեմ. Պուսակալի և երկուց միաբանութեանց կողմէն ձեռք առնուած միջոցներով, շուտով պիտի կործանի գիշերային հրաշալիքը և ցերեկեան լուսով նոր պարիսպ պիտի շինուի, իբրև սեպհականութիւն երեք ազգաց:

(Սիօն:)

ՀԵՌԱԳԻՐ ՅԱՍՏԻՍԱՆԷՆ:

Եստրախանայ Վեր. Պառաւարէն հետեւեալ հեռագիրը եհաս յ8-ն ամսոյս:

«Թաղաւոր Սայսրն յաջողութեամբ ժամանեց յԵստրախան ընդ ժառանգի Եղեքսանդր Եղեքսանդրովիչի և մեծի իշխանի Վլադիմիր Եղեքսանդրովիչի ի 4 սեպտեմբերի հաճեցաւ ելանել յայց Մայր Ակեղեցւոյ Հայոց, և ապա՝ Երբին Սայսերական Սեծութիւնն մեկնեցաւ ի 5 ամսոյս երթալ ի Պետրովսկի: